

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ՕՇԱԿԱՆԻ «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ»Ի ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Երևի կենսափորձ, կուտակումների ու համարձակության ամենատարբեր չափումներով ու խորխորատներով անցնելու պարտադիր պայմանը պիտի բաւարարել Յակոբ Օշականի գրական աշխարհին ձեռք տալու իրաւունքի համար: Պարտադրանքը գալիս է հենց հեղինակի սահմանած «կանգուն»ներից:

2011ից ի վեր Խաչատուր Աբովեանի անուան Յայկական Պետական Մանկավարժական Յամալսարանի «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը, երբ արդէն շուրջ երկու տասնամեակի գրահրատարակչական փորձառութիւն ունէր իր ետին, տուեց կարելոր որոշում՝ մէկ միասնական *Ամբողջական Օշական* գաղափարի տակ հաւաքել հեղինակի ստեղծագործական հունձքը: Դժուարին ճանապարհ անցած այս աշխատանքի առաջին պատրաստ հանգրուանը՝ «Ամբողջական գործեր»ի առաջին հատորը, լոյս տեսաւ 2020ին, Երեւանում, առաջին՝ *Խոնարհները* պոլսական ժողովածուի տըպագրութիւնից ճիշդ 100 տարի անց, ինչը կազմողները խորհրդանշական են դիտում: 832 էջանոց հատորն ընդգրկում է հեղինակի փոքրածաւալ ստեղծագործութիւնները՝ բանաստեղծութիւններ, այդ թւում՝ արձակ քերթուած-

ներ, պատմուածքներ, հէքեաթներ, պատկերներ: Ծրագրի մտայնացումը, հատորի խմբագրումը եւ առաջաբանը Սուրեն Դանիէլեանին են, պատասխանատու խմբագիրը Քնարիկ Աբրահամեանն է: Գիրքը լոյս է ընծայել «Չանգակ» հրատարակչութիւնը:

Ճակատագրականօրէն կամ պատահականութեան սկզբունքով՝ այս հատորը հովանաւորել են պոլսահայեր ուղեգրող Արամ Գամպուրեանն ու թատերագիր երջանկայիշատակ Արման Վարդանեանը: Չմոռանանք, որ հեղինակի պատմուածքների՝ կենդանութեան օրօք լոյս տեսած բոլոր երեք ժողովածուներն էլ տպագրուել են Պոլսում: Գրքի արտաքին գրախօսներն են բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆ. Սամուէլ Մուրադեանն ու պատմական գիտութիւնների դոկտոր Յակոբ Չոլաքեանը, հրատարակութեան է երաշխաւորել Խ. Աբովեանի անուան Յայկական Պետական Մանկավարժական Յամալսարանի գիտական խորհուրդը:

Իբրեւ մուտք ներկայացուած «Կազմողների կողմից» գրութեան մէջ ներկայացւում են այն մօտեցումներն ու սկզբունքները, որոնցով առաջնորդւել են հատորն ամբողջացնողները՝ ըստ Էութեան ուղղորդելով նաեւ ընթերցողին:

60 էջերի վրայ տարածուող ծաւալուն առաջաբանի մէջ Ս. Դանիէլեանը յանձնառութիւն է վերցրել ցոյց տալ Օշականին հասկանալու ճանապարհի խորդուբորդ կեանքները: Պատահական չէ «Հասկանալ Օշականին» խորագիրը, որը «Նախնական դրոյթներ. Օշականի գրականութեան նշանագիտութիւնը», «Օշականը՝ գեղարուեստական իմացական պատուհանների առջեւ», «Օշականի կեանքը եւ միջավայրերը. ժանրերի ընդմէջէն դէպի «Տիրոջը այգին» (մատենագիտական անհրաժեշտ շտկումներով)» ենթաբաժանումներով, ընդհանուր ուրուագծումներով փորձում է տալ օշականեան գրի յատկանիշները՝ խօսքը հիմնականում կառուցելով կենսագրական գծերի եւ ստեղծագործական հանգրուանների առնչութիւնների, ժանրային տարբերակումների ու թեմատիկ բացայայտումների շուրջ:

Յայտնի է, Օշականի բնագրերը տըպագրուել են ամենատարբեր պարբերականներում, նաեւ՝ առանձին ժողովածուներում: Այդ առումով հեշտ չի եղել հաւաքագրման աշխատանքը, բազմազան հրատարակութիւնների մէջ կողմնորոշուելու, մէկը կամ միւսը առաջնային դիտելու խնդիրը: Կազմողները գտել են այս պարագային թերեւս ամենից նպատակայարմար եւ գիտականօրէն ընդունելի տարբերակը՝ մամուլում հրապարակումների ժամանակագրական յաջորդականութիւնը, ինչը թոյլ է տալիս նաեւ նկատել ստեղծագործական նոյնական կամ տարաբեւեռ սելեռումները, որոնք դրսեւորել է հեղինակը նոյն ժամանակահատու-

ծում, ասենք, կողք-կողքի շարադրելով *Խոնարհները*, *Երբ պստիկ են*, *Հիւնն ու նորէն*, *Կայսերական յաղթերգութիւն* եւ դրա կողքին *Մահուան ծաղիկներ* շարքերը կազմող երկերը:

Բնագրերի առումով համադրուել են ժողովածուներով լոյս տեսած բոլոր՝ պոլսական *Խոնարհները* (1920), *Խորհուրդներու մեհեանը* (1922), *Երբ պատանի են* (1926)՝ Օշականի կենդանութեան օրօք տպագրուած, բէրութեան *Խոնարհները* (1958, հրատ. Յակոբ Օշականի աշակերտներուն), *Կայսերական յաղթերգութիւն* (1983), *Երկեր* (1998), *Օսկի օրանը* (2011, վերջին երեքը՝ երախտաշատ Պօղոս Սնայեանի խմբագրութեամբ), ակելի շատ համահաւաք եւ *Երբ պատանի են* վերատրդուած (Վարուժան Արք. Յերկելեանի խմբագրութեամբ) հրատարակութիւնները: Համադրուած են անգամ հայաստանեան սակաւ տպագրութիւնները. նկատի ունենք Ստեփան Կուրտիկեանի՝ 1979ին կազմած *Երկեր* եւ այս հրատարակութիւնը տպարան յանձնելուց անմիջապէս օրեր առաջ՝ 2019ին Արթուր Անդրանիկեանի խմբագրութեամբ լոյս տեսած *Խոնարհները* գրքերը: Սա ընդգծում ենք՝ յատկապէս ելնելով այն հանգամանքից, որ տարընթերցումները վերաբերում են հենց դրանց: Նկատի չենք առել դասագրքերում եւ *անթոյնգիտ*ներում ներառուած նիւթերը: Բնագրային տարբերութիւնները կամ տարընթերցումները նշանակուում են *տեքստ*ում եւ բերում ծանօթագրութիւնների բաժնում, որոնց յաջորդում է օգտագործուած գրականութեան ցանկը, ուր ընդգրկուած են ինչպէս առա-

ջաբանի, այնպես էլ բնագրում եւ այս հատուածի աղբիւրները՝ գրքերի եւ մամուլի անունների առանձնացումով: Նոյն սկզբունքով կազմուած են նաեւ անձնանունների ցանկերը՝ ծննդեան եւ մահուան թուականների եւ վայրերի, օտար անունների պարագայում նաեւ բնօրինակ լեզուով գրութեան, գործունեութեան ոլորտի եւ Էջաթիւերի նշումներով: Ինչպէս ամբողջ հատորում, այնպէս էլ այս հատուածում¹ ուղղագրութիւնը բերուած է միասնական տեսքի:

Գաղտնիք չէ, որ Օշականի ընթերցողից լեզուական բաւական բարձր պատրաստութիւն է ակնկալում՝ նախ՝ բառային արժէքը, ապա դրանից բխած պատկերն ընկալելու համար: 17 Էջերի վրայ ծաւալուող բառարանում հնարաւորինս փորձ է արուել լրացնել նաեւ տարբեր հրատարակութիւններում եղած բառարանների նիւթը, նկատի առնելով նաեւ արեւելահայ ընթերցողի պարագան, որի համար կարող են դժուարութիւն յարուցել անգամ զուտ արեւմտահայերէնին յատուկ բառային շերտերն ու քերականական ձեւերը: Բառերը բացատրուած են թէ՛ տողատակերում, երբ հատորի կտրուածքով առաջին անգամ են հանդիպում, թէ՛ բնագրի վերջում՝ այբբենական կարգով: Վերջում «առանձին տողով» ներ-

կայացումը կարելոր է նրանով, որ այս կամ այն կտորն ընթերցելիս անհրաժեշտութիւն չի առաջանում փնտռել անհասկանալի բառի հետ առաջին «հանդիպման» վայրը:

Բովանդակութիւնը բերուում է զուգահեռ նաեւ այբբենական կարգով, ընդ որում՝ տուեալ բնագրի Էջակալումի կողքին երկու դէպքում էլ փակագծում նշելով ծանօթագրութեան Էջը, իսկ արդէն ծանօթագրութեան հատուածում բերուում է բնագրի Էջը, ինչն աւելի դիրին է դարձնում ընթերցման թեքնիք կողմը:

Ամբողջական գործեր հատորների բովանդակային ընտրութիւնը կատարուած է ըստ *ժանրային բաժանման*՝ ներքին ժամանակագրութեան պահպանումով, ինչը սովորաբար յատուկ է ակադեմիական հրատարակութիւններին: Նախնական ծրագրի համաձայն՝ մտադրուել էինք նիւթը հրապարակ հանել երկու հատորով, որի հնարաւորութիւնը ծաւալը լիովին տալիս էր, սակայն բաժանումը այդ պարագային աւելի շատ *թեքնիք* բնոյթ կը կրէր, կը խաթարուէր նաեւ համառօտագրութիւնների, ծանօթագրութիւնների, գրականութեան եւ անձնանունների ցանկերի եւ բառարանի կազմման «կազմակերպութեան թիւնը», եթէ կարելի է այդպէս ձեւակերպել:

Ամենից բարդը՝ նիւթը տարբեր պարբերականներից ի մի բերելու դժուարին աշխատանքն էր: Այս առումով դժուար է թերագնահատել նախապէս Արտաշէս Տէր Խաչատուրեանի կազմած եւ Մարկ Նշանեանի խմբագրութեամբ ու լրացումներով լոյս տեսած

¹ Օրինակ՝ Յ. Օշականի բնագրում Դոստոեւսկու անունը կարդում ենք հետեւեալ տառադարձութեամբ՝ *Snuտոեւսկի*, Կայգերիինգը՝ *Քայգերիինկ*: Նման պարագաներում նշում են հեղինակային գրութեան ձեւերը՝ յղում կատարելով ընդունուած գրելաձեւերին. *Քայգերիինկ, տէն՝ Կայգերիինգ* (Յ. Օշական, *Ամբողջական գործեր*, հատոր 1 /բանաստեղծութիւններ, պատմուածքներ, հեքեաթներ, պատկերներ, Եր., 2020, էջ 803):

Յակոբ Օշականի մատենագիտությունը, որը մեծ չափով կողմնորոշել է նաեւ մեզ: Ի դեպ, մատենագիտությունը, ոչ այս ծաւալով ու ընդգրկումներով, ունի նաեւ նախափորձեր, ինչպէս դեռ Օշականի կենդանութեան օրօք հրատարակուած «Քաղհանք»², Ժիրայր Դանիելեանի «Մատենագիտական ծանօթություններ Յակոբ Օշականի մասին»³, Պօղոս Մնայեանի «Յ. Օշական թուականներով եւ թիւերով»⁴ աշխատասիրությունները: Անշուշտ, չի կարելի չհամաձայնել Մ. Նշանեանի հետ, որը, իր հերթին վկայակոչելով նաեւ Ա. Տէր Խաչատուրեանին, հաստատում է, թէ «...այսպիսի գործ մը չի կրնար կատարեալ ըլլալ: Իր Էութիւնն իսկ է չըլլալը: Մատենագիտական հատոր մը գործիք մըն է լոկ, որուն նպատակն է ապագայ հետազօտողներու գործը դիւրացնելու, եւ ապագայ բանասիրական աշխատանքներու դուռը բանալու: Բընական է, որ ըլլան անճշդություններ: Բայց բնական է մանաւանդ՝ որ ըլլան լեցնելիք բազմաթիւ բացեր»⁵: Իսկ այս գործը մենք դիտում ենք նաեւ այս յանձնառութեան կատարման փորձ՝ մեր հերթին հաւաստելով, թէ կան⁶ եւ

կարող են լինել նոր եւ դեռեւս չլուսաբանուած մատենագիտական յաւելումներ:

Այս ժողովածուի պատրաստման ընթացքը մեզ օգնում է նաեւ բերել քանակական տուեալներ, ինչպէս օրինակ՝ Օշականի աշխատակցած պարբերականների հիմնական աշխարհագրությունը, հաւատարմությունը այս կամ այն հանդէսին: Այս համաբնագրում արձանագրում ենք Օշականի ըմբոստ ուզին ու կեցուածքը՝ Պոլսոյ *Ազատամարտ* եւ ապա *Ճակատամարտ* խորհրդանշական պարբերականներին կայուն աշխատակցութեամբ: Միւս կողմից տեսնում ենք այն «հիւրընկալությունը», որ վայելել է հեղինակը յաճախ միաժամանակ մի քանի պարբերականներում (ասենք՝ 10ականներին *Ազատամարտի*, *Հայ գրականությունի*, *Մեհեանի*, *Նաւասարդի* Էջերում): Մենք արձանագրում ենք որոշակի ժամանակահատուածում *ժանրային* նախասիրություններն ու նախապատուութիւնները, ինչպէս օրինակ՝ փոքր արձակի հարցում, որը սկիզբ է առնում գրական մուտքից եւ ձգում մինչեւ 20ական թթ. երկրորդ կէս, այնուհետեւ փոքր դրուագներով շարունակուելով մինչեւ կեանքի վերջ: Պատահական չենք նկատում 20ական թթ. շեշտումը, քանի որ պատմութեան բոլոր ժողովածուները լոյս են տեսել հենց այդ տասնամեակում՝ 1920, 1922, 1926 թթ.: Սրա կողքին արձանագրում

² Յակոբ Օշական, *Քաղհանք*, հրատ. յոբելիական յանձնաժողովոյ, Երուսաղէմ, 1946:

³ *Երիտասարդ հայ* / գրական-հասարակական երկշաբաթաթերթ, Պէյրութ, 1973, 24 փետրուար, թիւ 70, էջ 10-11:

⁴ *Բագին* / ամսագիր գրականութեան եւ արուեստի, Պէյրութ, 1984, ԻԳ. տարի, յունուար-փետրուար, 1984, թիւ 1-2, էջ 4-30:

⁵ *Յակոբ Օշականի մատենագիտութիւն* / կազմեց՝ Մարկ Նշանեան, Արտաշէս Տէր Խաչատուրեանի կողմէ պատրաստուած նախագիծի հիման վրայ, Լոս Անճելըս, 1999, էջ 13:

⁶ Ինչպէս օրինակ այս հրատարակութեան «Ծա-

նօթագրութիւններ» բաժնում «Մինակ» գրութեան՝ *Սերմնացան* հատորում (Պէյրութ, 1998) ընդգրկուած լինելը եւ համադրումը (Յ. Օշական, *Անբողջական գործեր*, հատոր 1, էջ 722):

ենք նաեւ *ժանրային* բազմազանութիւնը, երբ սկսած 10ական թուականներէն, օրինակ, Կ. Պոլսի *Շանթի* էջերում երեւում են ա) «Թիւրքմենին աղջիկը» պատմուածքը եւ բ) «Սիպիլ» վերլուծական գրութիւնը»⁷, աւելի ուշ՝ *Մեհեան* հանդէսում՝ ա) «Աւետում-աղբիւր», բ) «Համբոյրի մը պատմութիւնը» գեղարուեստական գրութիւնները եւ գ) «Հարթենք»ների շարքը⁸, *Սիռնում*՝ ա) «Նարեկը» պատմուածքը, բ) «Սասունցի Դաւիթ» քնարախաղը եւ գ) «Արշակ Զօպանեան» վերլուծումը⁹: Սա մի երրորդ առաւելութիւն էլ ունի. զուգահեռաբար ի ցոյց է դրւում Օշականը՝ իբրեւ գրող եւ քննադատ, «երկու աշխարհ», որ ձեռք ձեռքի տուած քայլել են նրա ամբողջ կեանքում:

Ստեղծագործութիւնների համապարփակ ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս կատարել մէկ այլ ընդհանրացում եւս. խորագրերի կամ սահմանումների հարցում հեղինակը պահպանում է մտայնացումների երթելեկը, նաեւ *ժանրային* փոխանցումներում, ինչպէս *Խորհուրդներու մեհեանը* հեքեաթպատկերների ժողովածուն, ապա՝ թա-

տերական գործերը՝ «Երբ մեռնիլ գիտենք», «Օրն օրերուն»՝ «խորհուրդ» բնորոշումով, նոյն հեքեաթ տարազի տակ՝ *Կեանքին պէս, Օսկի օրանը* վէպերը, կամ «Վկայութիւններ» վերտառութեամբ փորձագրութիւնները յետագայում իբրեւ սեփական ստեղծագործական կեանքի «Վկայութիւն» *Համապատկերի* էջերում, «Քաղհանք»ն իբրեւ պատկեր-պատմուածք, ապա նաեւ՝ յոբելենական հատորի խորագիր:

Իւրաքանչիւր նիւթի համար ծանօթագրութիւններում նշուել է առաջին հրատարակութեան տեղը, որ Օշականի համար գրեթէ գերազանցապէս մամուլի էջերում է, ապա այս կամ այն ժողովածուի մէջ տեղ գտնելու հանգամանքը: Անհրաժեշտութեան դէպքում տրուել են պարզաբանումներ, մատենագիտական յաւելում-ճշգրտումներ: Բերւում են բնագրական անհրաժեշտ մեկնութիւններ, հեղինակային ակնարկների ենթամաստների վերհանում, ինչը, խոստովանենք, մեծացնում է կազմողների պատասխանատուութեան չափաբաժինը, որովհետեւ ակամայից ընթերցողի համար կարող է ուղղորդող դեր ունենալ: Բաւական երկար ժամանակ եւ ջանք է պահանջուել՝ մեկնաբանելու հեղինակի առանձին տողերի յուշումները, ցոյց տալու միջտեքստային երեւոյթները, ընդ որում՝ թէ՛ այլ ստեղծագործողների, թէ՛ իր՝ հեղինակի իսկ գործերի ու յղումների արձանագրումով:

Այդ օրինակներից մէկը մեզ տալիս է այս ժողովածուի մէջ տեղ գտած «Հարցում» քերթուածը եւ նրա ծանօ-

⁷ Համապատասխանաբար տե՛ս՝ ա) *Շանթ* / կիսամսեայ պատկերագրող հանդէս գրական եւ գեղարուեստական, Կ. Պոլիս, 1913, Բ. տարի, 1/14 յունուար, թիւ 34-35, էջ 173-178 եւ բ) 1911, Ա. տարի, 15/28 դեկտեմբեր, թիւ 13, էջ 197-200:

⁸ Համապատասխանաբար տե՛ս՝ *Մեհեան* / հանդէս գրականութեան եւ արուեստի, Կ. Պոլիս, 1914, թիւ ա) 2, բ) 5 եւ գ) 1, 2, 4, 7:

⁹ Համապատասխանաբար տե՛ս՝ *Սիռն* / հայ ամսագիր կրօնական – գրական – բանասիրական, Երուսաղէմ, ա) 1935, Նոր շրջան, Թ. տարի, յունուար, թիւ 1, էջ 18-20, փետրուար, թիւ 2, էջ 54-57, բ) 1941, ԺԵ. տարի, մարտ-ապրիլ, թիւ 3-4, էջ 62-64, գ) 1938, ԺԲ. տարի, յունիս, թիւ 6, էջ 186-189, թիւ 7, էջ 214-217:

թագրութիւնը¹⁰: Ի դէպ, ընդգծենք ոչ երկրորդական մի հանգամանք. բոլոր քերթուածները, ի տարբերութիւն արձակ գործերի գերակշիռ մասի, առաջին անգամ են մտնում հատորի կազմի տակ:

Վերոնշեալ երկը լոյս է տեսել «Արմաւենի» տարեգրքում¹¹: Նախ, ճշգրտորէլ է այն հանգամանքը, որ վրիպում է «Անդաստան»ի 1955ի թիւ 5ում «անտիպ» յղումը, երբ քերթուածը լոյս է տեսել դեռ մօտ երկու տասնամեակ առաջ: Աւելին՝ Բէյրութի *Նայիրի*ի 1951 թուականի 3-4 միացեալ թուի մէջ Պ. Սնապեանը հատուածներ է տպագրում «Բանագող մը՝ Եղիվարդ» յօդուածի մէջ¹², որը կրճատումներով գտնում ենք նաեւ Բէյրութի *Աղղարար* շաբաթաթերթում¹³: Բանասիրական որոնումները մեզ հասցրին նոյն շաբաթաթերթի էջերում որդի Օշականի «Յարցում» համանուն խորագրով բանաստեղծութեանը¹⁴, որը գալիս է միանալու բանավէճի ամբողջացմանը:

Ինչ մնում է Յ. Օշականի քերթուածին, այն, մեր համոզումով, երկխօսութեան դուռ է բացում Վահան Թէքեանի՝ 1917ին գրուած «Պիտի ըսենք Աստուծոյ» բանաստեղծութեան հետ:

¹⁰ Յ. Օշական, *Ամբողջական գործեր*, հատոր 1, էջ 73-75 եւ 722-723:

¹¹ *Արմաւենի* / տարեգիրք, Գահիրէ, 1937-1938, Ա. տարի, էջ 26-27:

¹² Այստեղ մեր խնդրառութիւնից դուրս ենք նկատում այդ յօդուածի բովանդակային ծայքերի մէջ խորամուխ լինելը:

¹³ Տե՛ս՝ *Աղղարար* / շաբաթաթերթ, Պէյրութ, 1951, Թ. տարի, 16 յունիս, շաբաթ, թիւ 450, էջ 3:

¹⁴ Տե՛ս՝ Նոյնը, 1952, Ժ. տարի, 27 յունիս, ուրբաթ, թիւ 504, էջ 11:

Ասուածն աւելի առարկայական դարձնելու համար բերենք համապատասխան հատուածները.

Օշական.

Բայց չըսիր, Տէր.
Տեղը անոնց
Որոնք դժոխքն արդէն ճանչցան
Արեւին տակ սա աշխարհին:
.....
Ներէ անոնց որ չվախնան
Քու դժոխքէդ
Յաւասարիլ որ չի կրնար
Թուրքէն շինուած մեր դժոխքին¹⁵:

Թէքեան.

Պիտի ըսենք. «Մեզ դժոխք, դժոխք դրկէ՛ անգամ մ'ալ.
Զէ՛ որ զայն լաւ կը ճանչնանք, զայն ճանչցուցիր մեզ շատ լաւ,
Ու Թուրքերուն յատկացնուր արքայութիւնդ ամբաւ...»¹⁶:

Զմոռանանք նաեւ, որ Վ. Թէքեանին «դիմումները» մէկից աւելին են, այդ թուում եւ՝ քննադատական տիրոյթում, ինչի ամփոփումը կարող ենք համարել *Սփիւռքը եւ իրաւ բանաստեղծութիւնը* ուսումնասիրութիւնը (Երուսաղէմ, 1945):

Այս հատորի հրատարակութեան պատրաստման ընթացքում ուշագրաւ էջեր բացուեցին Յ. Օշականի ձեռագրերի պատմութիւններից ու ողիսակաւնից: Յատկապէս նկատի ունենք «Աղ-

¹⁵ Յ. Օշական, *Ամբողջական գործեր*, հատոր 1, էջ 75:

¹⁶ *Արեւ* / ազգային շահերու օրկան, Գահիրէ, 1919, Ե. տարի, դեկտեմբեր 22, թիւ 97 (712):

ցան» եւ «Աղցանը» վերտառութեամբ պատմուածքները: Նրանցից առաջինը հրատարակել է Պ. Մնապեանը *Ազդակ* գրական - *Ազդակ* արուեստի պարբերականի էջերում¹⁷, ի թիւս «Երբ պըզտիկ են» ընդհանուր խորագիրը կրող այլ ուշագրաւ կտորների, որոնց ձեռագրերը, հակառակ մեր ջանքերին – Անթիլիասի Մատենադարանից մինչեւ Յ. Օշականի ժառանգների հետ կապը – մնացին անարդիւնք, իսկ ահա Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանում յայտնաբերուեց դեռեւս 1925ին Գահիրէի *Արեւում*, ապա *Երբ պատանի են* հատորում լոյս տեսած «Աղցանը» պատմուածքի ձեռագիրը, որից եւ հատուած ենք ներկայացնում ստորեւ:

Ամբողջական գործեր առաջին հատորի ընդգրկումների առումով նկատենք, որ այստեղ են մեզ ծանօթ *Խոնարհները* ժողովածուն եւ շարքը, ուր «Խոնարհները» սեռի ու արեան ճամբով, «Գեղի կեանքէն» եկող, բայց արուեստի մակարդակին բարձրացուած հերոսներն են: «Ժողովածու» եւ «Չարք» եզրոյթները դնում ենք կողք կողքի, քանի որ շարքը ներկայացնող ոչ բոլոր պատմուածքներն են մտել ժողովածուի մէջ: Յետագայում, ասենք, Բէյրութում լոյս տեսած *Խոնարհները* ընդհանրական ժողովածուի մէջ մտել են ամենատարբեր պատմուածքներ, որոնք ոչ բոլորն են մամուլում իրականում լոյս տեսել հենց *Խոնարհները* վերտառութեամբ: Առանձնացնում ենք *Շահալայ* վիպակը (1924), որով, ըստ Է-

¹⁷ *Ազդակ գրական - Ազդակ արուեստի* / պարբերաբերթ, Պէյրութ, 2009, թիւ 8, 9 եւ 10:

ուրթեան, Յ. Օշականը փակել է *Խոնարհները*: Թերեւս հենց այս է եղել պատճառներից մէկը, որ *Խոնարհները* պոլսական ժողովածուի վրայ նշել է Ա. գիրք՝ նպատակ ունենալով յետագայում շարունակել հերոսների այս գծի բացայայտումները:

Այստեղ են խորհրդանշական *Խորհուրդներու մեհեանը* (Կ. Պոլիս, 1922) կազմող հեքեաթ-պատկերները, գիւղի կեանքը սահմանող բազմերես «խորհուրդները»՝ Իզնիկի լճի, Աղուընակ-Քարի, Կաղանդի ու Կանանչ-Կիրակիների պատմութիւններով՝ իր «ուսուցչի»՝ Ռուբէն Չարդարեանի հեքեաթի ու առհասարակ հեքեաթի *ժանրի* նոր ու ինքնատիպ մեկնութիւններով¹⁸, որոնց

¹⁸ Արժէ կանգ առնել հեքեաթի *ժանրի* օշականեան ըմբռնումի վրայ, ինչը Ռուբէն Չարդարեանի առիթով դիտում է իբրեւ «կեանքին ու խորհուրդին համադրում» (Յ. Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան*, եօթներորդ հատոր / Արուեստագէտ սերունդ, Անթիլիաս, 1979, էջ 272), յատկանիշ, որ արդէն հօր օրինակով բացատրում է որդի Օշականը. «Այս *ժանրը* գրեթէ անտեսուած էր արեւմտահայոց մօտ մինչեւ Ռուբէն Չարդարեան, որ անոր գեղարուեստական զգեստ մը հագցուց՝ 1895ի *Շաղկէն* սկսելով: Երկրորդական, երրորդական գրողներ փորձած էին (Մալկարացի Կարօն, Մ. Ռուբէնեան, Արամ Անտոնեան ու 1900էն անդին՝ Մուշեղ Վրդ. Սերոբեան, Լեւոն Մեսրոպ) ու ձախողած: ...Օշականի հեքեաթը, իր քնարական շունչով, լեզուական թարմութեամբ, գոյներու, գիծերու, բոյրերու եւ ձայներու *քոլորի*ով (ընդգծումները հեղինակինն են – Բ.Ա.) ու մանաւանդ ազգային յիշողութենէն զալու հանգամանքով՝ ուշագրաւ երեւոյթ է: Մեային գրգիռին ու արտաքին բնութեան միջեւ հոն գոյացած նոյնացումը նախապատրաստութիւն մըն է ապագայի իր վեպերուն, մասնաւորաբար *Մնացորդացի* մէջ, ուր կեանքի իսկութեան տանջագին իր փնտրուտութէն տարուած՝ ան պիտի հասնի հեքեաթի եւ առասպելի ոլորտներուն: Քայլ մը եւս՝ եւ Օշական պիտի սկսի շփոթել *իրականութիւնն* ու *հեքեաթը* (ընդգծումները մերն են – Բ.Ա.), յատկապէս իր իսկ ինքնակենսագրութեան պարագա-

մեջ նաեւ՝ «Մահուան ծաղիկներ»՝ արձակ քերթուածներ յիշեցնող շարքը (հեղինակային վկայութեամբ՝ գրուած 1916ին): Վերջինի առիթով մենք տեսնում են այս գրքի յատկանշական գծերից եւս մէկը. մէկ ընդհանուր տանիքը հնարաւորութիւն է տալիս որսալ «մահուան ծաղիկներ»ի յաճախանքը՝ իբրեւ ստեղծագործական սեւեռում, որ ձըգւում է մինչեւ կեանքի վերջ՝ մինչեւ 1947 թուականը: Աւելին՝ նաեւ բանաստեղծական *ժանրային* դրսեւորումով¹⁹, ինչը գալիս է արդարացնելու նաեւ այս կտորներին տրուած «արձակ քերթուած» բնորոշումը, արդէն նաեւ հեղինակի ձեւակերպումով²⁰: Այսպիսով, ըստ էութեան, մենք հաշուում ենք «Մահուան ծաղիկներ»ի երեք կտոր:

Այստեղ են *Կայսերական յաղթերգութիւն* շարքի 5 պատմուածքները՝ «Արծիւները», «Վրէժը», «Վրդովուած խղճմտանքը», «Տանտան»ը», «Կայսերական յաղթերգութիւն»ը, ուր խորհրդանիշի տակ, բայց շատ սուր կերպով բերում է հայ-թուրք յարաբերութիւնները, երրորդ կողմի՝ կայսեր Վիլիելմի «յաղթերգութիւն»ը: Դրանք այդպէս էլ իրենց գրութեան ժամանակ՝ 1920-1921 թթ., թէպէտ շատ խորհրդանշականօրէն լոյս տեսան *Ճակատամարտ* օրաթերթում, բայց հեղինակի կենդանութեան օրօք այդպէս էլ հատորի մէջ չմտան, սակայն այսօր էլ շարունակում

յին... Այս հէքեայթները... կը կազմեն *Խորհուրդներու մեհեանք* հատորին էութիւնը» (*Բագին / ամսագիր գրականութեան եւ արուեստի*, 1984, յունուար-փետրուար, թիւ 1-2, էջ 151):

¹⁹ Յ. Օշական, *Անրողջական գործեր*, հատոր 1, էջեր 78-80 եւ 724:

²⁰ Նոյն տեղում, էջ 700:

են պահպանել իրենց արդիականութիւնն ու ճանաչողական խոր շերտերը: Այստեղ են նոյն *Կայսերական յաղթերգութիւն* 100ամեակի ժողովածուի մէջ մտած «Հինէն ու նորէն» եւ «Երբ պըգտիկ են» շարքերի պատմուածքները: Այս առումով էլ այս նոր հրատարակութիւնը բերում է յստակեցումներ՝ նշելով, թէ ո՛ր ժողովածուի մէջ ինչ տեղադրում ունեն երկերը, ինչպէս, ասենք, «Չուանները» պատմուածքի ծանօթագրութեան մէջ²¹, երբ որեւէ ենթավերնագիր չի նշուում սկզբնաղբիւր հանդէսում, բայց թէ՛ *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*ում, թէ՛ *Կայսերական յաղթերգութիւն* ժողովածուի մէջ նշուում է «Հինէն ու նորէն» խորագրի տակ:

Այստեղ է պատանեկան թրթռումների, սիրոյ ու սեռի խորհրդի պատումը, որը իրօք որ շատ բան ունի հեղինակի կենսագրութիւնից: Խօսքը *Երբ պատանի են* ժողովածուի մասին է, որի ինքնակենսագրական հիմքի մասին ուշագրաւ վկայութիւններ ունի Օշականի մանկութեան ընկերը՝ Գեորգ Չագրեանը: Յատկապէս նկատի ունենք Բուբուլի կերպարի շուրջ դատողութիւնները, երբ նկատում է, թէ «Երբ որ պատանի են»ի Բուբուլը դեռ կ'ապրի Փարիզի մէջ (1950ի դրութեամբ - Բ.Ա.): Պրուսայի այն աղջնակը, որուն ճաշի սակառը «մեղքի տոպրակի» պէս տարիով տունէն վարժարան կը փոխադրեր, ճամբու ընթացքին՝ խռովքի թել մը կը նետէր միամիտ իր տղու աչքերէն դէպի անոր դեղձան մագերուն հիւսքը,

²¹ Նոյն տեղում, էջ 758:

բոսոր այտերուն թաւիչը կամ «դօգօնայ» կօշիկներուն մէջ պարուրուած՝ պտըլիկ, ադուորիկ տոտիկներուն կառոյցը:

Խեղճ Յակոբ, ինչ աճարարութիւններու կը դիմէր իր «սիրածին» աչքերէն վրիպեցնելու համար վիճակը «նզովեալ» իր ոտքերուն, որոնք հալած ձիւներու ջուրերուն մէջ խխում-թաթախ եղած էին: Իր հալումաշ տափատին փեթրտուած կարկտաններուն «անքաւելի մեղքը»՝ աւելի տխուր պարագայ»²²:

Այստեղ կ'ուզենայինք ընդգծել ոչ երկրորդական հանգամանք՝ շարքի բարերար ազդեցութիւնը ֆրանսահայ քնարաշունչ արձակագիր Վազգէն Շուշանեանի գրականութեան վրայ. պատահական համարել հենց նոյն 1926ին նրա յայտարարութիւնը, թէ «Օշական սորվեցուցած է... մեզի, մենք, որ վարպետ չենք ճանչնար, կատաղութեամբ ու առանց ընկրկումի կռուիլ յանուն գեղեցիկին, տապալել սուտ աստուածները ու հայիոյել կաւատներուն: Օշական մեր անմիջական երեցն է: Ա՛ն է, որ պետք է առջեւէն քալէ: Գլուխը բարձր՝ մեծ յաղթանակին համար: Ուսերը բեռնաւոր՝ քանաստեղծութեան անփոխարինելի հարստութեամբը: Կեցցէ՛ Օշական»²³, հանգամանք, որ ժամանակին նկատել է Ս. Դանիելեանը²⁴:

²² Տե՛ս՝ *Հայրենիք ամսագիր*, Պոստոն, 1950, 28րդ տարի, դեկտեմբեր, էջ 39-40:

²³ *Նաւասարդ* / պարբերական գրականութեան եւ արուեստի, Պուրբէշ, 1926, Բ. տարի, թիւ 11, մայիս, էջ 310:

²⁴ Տե՛ս՝ Ս. Դանիելեան, *Միջուկի տրոհումը / ափիւռքահայ գրականութեան պատմութիւն*, գիրք 1, Ներածութիւն, Եր., «Չանգակ-97», 2011, էջ 69:

Ի վերջոյ, դրն է Յ. Օշականի փոքր արձակ տիպաբանութիւնը. բարքի ու հոգեբանութեան, Պրուսայի ու նրա շրջակայքի հայաշունչ բնաշխարհի կենդանագիր պատկերները, որոնց էութիւնը հաւաքաբար լաւագոյնս բացայայտում է ինքը *Վկայութիւն* հատորի մէջ. «Ո՛վ կայ ետեւը երագային քնքշութեամբ եւ ապրումին խաժ, շաղոտ թարմութեամբը գոլուոր այն պատկերներուն, որոնք կ'անուանին *Երբ պատանի են, Երբ պստիկ են, Վկայութիւններ*²⁵, *Խորհուրդներու մեհեանը*, բուրն ալ շատ վաւերական, թէւ տարօրինակ, շատ իրաւ, թէւ բացառիկ անձնաւորութեան մը, տրամաներու, զգայնութեան մը կնիքովը բաբախուն, մնայուն կերպով մը, գրեթէ իրենց ամեն մէկ տողին, բայց ստեղծելով նոյնքան վաւերական, տարօրինակ, բացառիկ պատրանքն ալ *իրաւէն* անդիին»²⁶:

Ի հարկէ, ինչ տարիների վրայ ձըգլող ժամանակահատուածը թոյլ է տա-

²⁵ Այս կտորները «Ես ինձի», «Սերմնացան» եւ այլ շարքերի հետ ընդգրկուելու են երկրորդ հատորում:

²⁶ Յ. Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան*, տասներորդ հատոր / Վկայութիւն, Անթիլիաս, 1982, էջ 18-19: - Ընդգծումը հեղինակին է - Ք.Ա.:

Իրան որ: Գնց այդ *իրաւէն* է, որ քննել է նաեւ լիբանանահայ գրող, տեսաբան Գ. Աճեմեանը, որն իրաւացիօրէն Օշականի գրականութիւնը դուրս է բերել ինքնակենսագրական նեղ արահետից՝ տանելով ընթերցողին համամարդկային ապրումի՝ արուեստի դաշտ: Իսկ *իրաւը* լիբանանահայ գրողի համար գրականութեան մէջ իրապաշտութեան՝ ճշմարիտի հոմանիշն է. «Ճշմարիտին ձգտելու, անկէ սորվելու ու անոր հետ շաղկելով ձուլուելու մեծ մղումն է, որ կը վերածուի անհրաժեշտ նախապայմանի մը գրականութեան մէջ» (Գ. Աճեմեան, հատոր Դ. / *Քննադատական երկեր*, Եր., «Չանգակ», 2018, էջեր 127 եւ 217):

լիս նաեւ կռահել այն բազմաբնոյթ չերեւացող աշխատանքը, որը կատարւել է գրքի ամբողջացման ճանապարհին, եւ այստեղ «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը իր երախտագիտութիւնն է յայտնում այն անհատներին ու կազմակերպութիւններին, որոնք օժանդակել են նիւթի՝ հնարաւորինս ամբողջական մատուցման ճանապարհին: Խօսքը վերաբերում է Հայաստանի Ազգային գրադարանին՝ յանձին մատենագիտութեան բաժնի վարիչ Մայա Գրիգորեանի, Եղիշէ Չարենցի անուան ԳԱԹին՝ յանձին տնօրէն Կարօ Վարդանեանի, յատուկ շնորհակալութիւն Պէյրութի Հայկազեան Համալսարանի Տէրեան գրադարանի ֆոնդապահ Վերա Կոստանեանին՝ հարիւրաւոր Էջեր անձանձիր հասցնելու համար, Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան Հայր Վահան Ծայր. Վարդապետ Օհանեանին՝ «Ազատամարտ» օրաթերթի հաւաքածոյից գրեթէ անգտանելի դարձած բնագրեր մեզ տրամադրելու համար, եգիպտահայ մտաւորական Պերճ Թերզեանին, մուտքագրողներ Նելլի Թադէոսեանին, Գայիանէ Ղազարեանին եւ Լուսինէ Տօնոյեանին, ձեւաւորող Գրիգորի Յարութիւնեանին, Էլի ուրիշներին:

Մեր կարծիքով, ամէն մի նոր հրատարակութիւն պիտի մի քայլ առաջ լինի նախորդներից: Այս տեսանկիւնից բնութագրական է Ս. Դանիէլեանի դիտարկումը, թէ «հրատարակիչներն ու առաւել եւս խմբագիրները միշտ ունենում են յանդուգն գայթակղութիւն, թէ իրենց կազմած կամ խմբագրած գիրքը լինելու է լաւագոյնը այս կամ այն հեղինակի նախկին բոլոր հրատարակութիւնների մէջ, ճիշդ ինչպէս գրողը, որին թւում է, որ իր վերջին գիրքը նախորդներին անհամեմատ գերազանցելու է: Յ. Օշականի պարագային թւում է՝ այլ կերպ լինել չի կարող. իւրաքանչիւր ժողովածու, որերորդն ուզում է լինի, նորովի է բացում հանրածանօթ գրողի դիմագծի ծալքերը, երեւան հանում գիտական ու կենսագրական նորոգ տրւեալներ: Մենք քայլ առ քայլ մօտենում ենք գրող-երեւոյթի ամբողջական դիմագծերի ներկայանակին»²⁷:

Ամբողջական գործերի առաջին հատորի կազմողները ելել են այն մտայնութիւնից, որ Օշականին «հասկանալու» արդիւնաւոր ճանապարհներից մէկը հենց գիտական ու ամբողջական հրատարակութեան շարունակական իրագործումն է:

²⁷ Յ. Օշական, *Ամբողջական գործեր*, հատոր 1, էջ 11: